

տակն էր... նոյն տարւոյն մէջ յնկարագրահան-
դիպած պատերազմաց ստոյգ պատմութիւնն
տարածել յարեւելք» «Պատմ. հայ. Դպր. Բ.՝ 2, 383): Այս Յիշատակարանը չեմ տե-
սած, բայց հաւանօրէն լոյս տեսած է Տարե-
գրութեան դիրքով իբրեւ տարեգիրք 1807ի
Օգոստոս—Սեպտեմբերին, եւ ոչ իբրեւ «պար-
բերական տետրակներ», ինչպէս կը հաւաստէ
Արձագանք, 1882, Թ. 21:

Յաջորդ տարին խորհուրդ կու տար Հ. Ղ.
Ինճիճեան Կ. Պոլսէն Գեր. Ազոնց Աբրահամի
Վենետիկ (Թուղթ 9 Յուլիս 1808), որ Յիշա-
տակարանի ձեւն եւ անունը փոխելով՝ արուի
անոր լրագրի կերպարանք: Հ. Ինճիճեան կը
զրէր¹:

«Այժմ պարտ է միւսանգամ տպագրել²,
բայց առ ի հաճոյ կացուցանել ժողովրդեան՝
տպեցի ամենեւին ըստ ձեռնոյ կազմեցայի եր-
կիջեան, ի քառեակ թուղթս: Ճարտարու-
թիւն յորինողին յայսմ պարտի լինել, զի
որչափ եւ կարէ համարօտ խօսիւք՝ գրագիտու-
թիւն լրոց ժողովուցէ, որոչ որոչ սասցուա-
ծով, որպէս սովորութիւն է ի նամակագրու-
թեան. պարտ է ի բաց բաննալ զյառաջարա-
նական գրոյցս, չյարուցանել տարակուսու-
թիւնս, եւ ոչ կոչել ի վկայութիւն. այսպիսի
ոճ տարեգրութեան կամ պատմութեան է սե-
փական: Ըստ փոփոխելոյ ձեւոյն՝ փոփոխե-
ցաք եւ դանունն, զոր յուրոյն թղթի գրեալ՝
եղի ի նամակիս³. նաեւ եղաք բան ինչ իբր
ճակատ գործոյն, զոր յամենայն նուագս,
տպագրութեան պարտ է զնել: Այս գործ
ունի լինել հաճոյ ժողովրդեան առաւել քան
գեղանակն. զի ի մտի եղեալ են, թէ այս
է հաւաքունն ամենայն կազեղայից, մինչեւ
սուն Գալլիմաքի Պէյի գնեաց զմին⁴: Միայն
զգուշացի՝ չզնել ինչ որ հայի ի սահման տէ-
րութեան⁵, եւ ոչ որ հայի ի նուագութիւն
Եկեղեցւոյ, զի տայ գայթակղութիւն»:

Ինճիճեանի այս հրահանգներն ըստ ամե-
նայնի կը պատշաճին «Դիտակ Բիւզանդեանի»
1808 տարւոյ հրատարակութեան, որ թէեւ

¹ Հ. Բ. Սարգիսեան, Երկհարիւրամեայ գրական-
նական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վե-
նետիկ Միսիթարեան Միարանութեան, Վենետիկ 1905,
էջ 28:
² Պէտք է իմանալ՝ տպագրել զՅիշատակարան:
³ Հ. Սարգիսեան կը ծանօթագրէ հոս. «Գծարա-
տարար, սակայն, մենք չի գտանք Ինճիճեանի այդ նոր
ուրուագիծը, յիշեալ նամակին մէջ»:
⁴ Պէտք է իմանալ, թէ Դիտակին հրատարակու-
թեան յառաջ արդէն բաժանորդագրուած է անոր յի-
շեալ տունը:
⁵ Իմացիր՝ Օսմանեան:

Յունուար ամսի լուրերն կը հաղորդէ, բայց
պէտք է լոյս տեսած ըլլայ 1808 Օգոստոս—
Սեպտեմբերին:

Հ. Բ. Սարգիսեան, թէեւ դուշակած է
թէ խօսքը հոս Դիտակի մասին է, բայց «որով-
հետեւ այսպիսի մի հրատարակութիւն եւ ոչ
իսկ Ս. Ղազարու գրատան մէջ կը գտնուի,
կ'ըսէ, ապա ուրեմն կը մնայ ստոյգ, թէ Դի-
տակը «Արշարունեաց Ընկերութեան անհա-
մաձայնութեան պատճառաւ այդ թուականին
չի կրցաւ տպագրուել եւ յետագուցաւ
մինչեւ 1812»: Բայց միտ չէ դրած Հ. Սար-
գիսեան, որ Արշարունեաց ընկերութիւնը
1812ին հիմնարկուած էր: Նաեւ Դիտակի
1808ի տարւոյ չգոյութիւնը Ս. Ղազարի Մա-
տենագրարանին մէջ անոր անգոյութեան ա-
պացոյց չի կրնար ծառայել:

Ըստ այսմ Դիտակ Բիւզանդեան ձեւնար-
կուած եւ հրատարակուած է Միսիթարեան-
ներէն 1808ին, խորհրդով Հ. Ղ. Ինճիճեանի,
իբրեւ ամսաթերթ:

Դիտակի այդ անգրանիկ թիւը ունիմ ես
աչքի առջեւ, որ այսպիսի ճակատ կը կրէ:

ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ
1808. ՅՈՒՆՎԱՐ:

Աս գործքս է պատմութիւն հիմակվան
Եղածներուն. աւ կարդալով՝ նստած տեղդ
իբր քէ կըտեսնաւ ինչ որ կըլլայ հիմա աշ-
խարհիս վրայ: Մէկ քաղքիմը մէջ ես, բայց
որպէս քէ շատ քաղքիմը վրայիս՝ ա-
նակ տեղեակ կըլլաւ ամբէն Եղածներուն:
Որոնց մէջ որ գտնուի, ինչ բանի վրայ որ
խօսք բացվի, չես երեւնար տգէտ անձանօք,
հապա կրնաս տեղնիտեղը պատասխան տալ,
ու տգէտներուն սուտը կըրնաս իմանալ:

Խելացի ըլլալու սէր ունեցողը, պիտո
առաջ պատմութիւն կըսորվի:

Թերթս լոյս տեսած է 1808ի աշնան
սկիզբը, 19 × 14,3 հմ. մեծութեամբ (բնա-
գիր), ութը երկուսին էջերով. տպագրութեան
տեղը չէ նշանակուած:

Չունի յառաջարան, չի շօշափեր եկեղե-
ցական դէպքերն եւ ոչ ալ թիւրքիայի սահ-
մանները: Հետեւեալ աշխարհներն նկատի
առնուած են գլխաւորաբար. Ամերիկա, Չվի-
ցէրի, Իգալիա, Ինկիլո, Լէհ, Մոսկով կամ
Ռուս, Նէմցէ, Շվէտ, Պոուչ, Ռէնօի դաշ-

նակցութիւն, Սպանիա, Տանիմադա, Փոր-
զուգալ, Օլանտա կամ Յիլէմէնկ, Փոսնոս:

«Դիտակ Բիւզանդեան» այս նոր անուն
եւ նոր ձեւի մէջ շարունակութիւնն է Յիշա-
տակարանի, ինչպէս կը տեսնուի հետեւեալ
տեղիքներէն. էջ 5ր. «Ռէնօի դաշնակցու-
թեանը վրայ գրեւենք անցած տարւան Յիշա-
տակարանին մէջ: Աս տարւան գլխաւոր բա-
ները կը նշանակենք հոս»: էջ 6ա. «Տանի-
մադոսյի մայրաքաղաքին... գլուխը եկած
բանը... ինչպէս գրեւենք անցած տարւան
Յիշատակարանին մէջ»: այսպէս նաեւ էջ 7ա.
«Անցած տարւան Յիշատակարանին մէջ ինչ
որ տարակուսանօք գրեւէինք» (Փորթուգալի
մասին):

Յայտնի չէ թէ թերթս ունեցա՞ւ շարու-
նակութիւն: Որովհետեւ լուրերը իբր 8 ամ-
սուան յաղաղամբ կը հաղորդուէին, հաւա-
նօրէն չգտաւ թերթը քաջալերութիւն եւ ան-
գրանիկ թիւէն ետքը մինչեւ 1812 ուրիշ թիւ
լոյս չընծայեց:

Ճիշդ 4 տարի ետքը, 1812ին, Օգոս-
տոս 1ին կը սկսի միւսանգամ լոյս տեսնել
Դիտակ Բիւզանդեան, այս անգամ Կ. Պոլսոյ
Արշարունեաց Ընկերութեան ծախքով եւ կը
շարունակուի մինչեւ 1816 Սեպտ. 8:

- Լոյս տեսած են.
- 1812 (Մեծութիւն՝ 17,5 × 12,1), Թ. 1—12
(առանց թուահամարի) (էջք 48).
 - 1813 (Մեծութիւն՝ 18 × 12), Թ. 1—71 (էջ
316).
 - 1814 (Մեծութիւն՝ 20,1 × 14), Թ. 1—23
(էջ 454)⁶.
 - 1815 (Մեծութիւն՝ 20,1 × 14), Թ. 1—93
(էջ 454).
 - 1816 (Մեծութիւն՝ 20,1 × 14), Թ. 1—42
(էջ 168):

«Դիտակ Բիւզանդեան» զազրեցաւ 42րդ
թուով: Ամբողջական հաւաքածոյ մը կը
գտնուի Վիեննայի Միսիթարեան Մատենա-
գրարանի մէջ:

Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ



⁶ Յատկուած՝ 24 Մայիս 1814 (4 էջ առանց իջա-
համարի):

ՍՐԹԷՈՆ ԴՊՐԻ ԼԵՀԵՑՅՈՑ ԵՐԿՈՒ
ՏԻՇԵՏՈՒԹՅՈՒՆ

1. ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՆԻՎՈԼԱԿԱՆ

Սրմէնոն դպիր իւր Ուղեգրութեան կից
տուած տարեգրութիւնը կ'աւարտէր հա-
տուածով մը, որ նուիրուած էր Մելքիսե-
ղեկ կաթողիկոսի Լեհաստան այցելութեան:
Յայտնի չէ ինչ պատճառաւ՝ կիսաւարտ թո-
ղուցած էր հեղինակը այս Լեհաստան թո-
ղարու պատմութեան համար այնքան կա-
րեւոր հատուածը: Առանց տարակուսի մտա-
զրութիւն ունէր Սրմէնոն նկարագրել հոն,
համարօտիւ կամ ընդարձակ տողերով, Մել-
քիսեղեկ կաթողիկոսի անխոհեմ միջամտու-
թիւնն Լեհաստան եկեղեցական խնդրոց մէջ,
Նիկողայոս արքեպիսկոպոսի ձեռնադրու-
թեան միջադէպը, անոր ի Կամենից Գրիգոր
Կեսարացւոյ հետ ունեցած բախումն եւ վեր-
ջապէս թաշատուր Կեսարացւոյ նուիրակու-
թեամբ այցելութիւնն ի լոյլ եւ տիրող գժտու-
թեանց զայրացումը, որուն հետեւութիւնն
եղաւ արքեպիսկոպոսին յարունն կաթողիկէ
Եկեղեցւոյ¹:

Այս դէպքերուն մօտաւոր ակնատեսն
էր Սրմէնոն. անիկա այս միջոցին կը գտնուէր
Լվով իբրեւ ուսուցիչ տեղւոյն հայկական
զարոյցին: Իր վերոյիշեալ տողերէն արդէն կը
տեսնուի, թէ անիկա կաթողիկոսին համա-
կրնեւէն չէր: Այն անցուդարձերու հան-
դէպ, որոնք ամբողջ քաղաքը գրեթէ 10 տարի
վրդովեցին, չէր կրնար ինքը անտարբեր մնա-
ցած ըլլալ: Իր մէկ Յիշատակարանը էջ-
միածնի Թ. 1004 ձեռագրին մէջ, ցոյց կու
տայ թէ բոլոր հոգեով յուզուած էր ինքն ալ.
Հոն դառնացած սրտով կու տայ 1631—1636
տարիներու անցքերու նկարագրութիւնը:
Պէտք է ենթադրել ասկէ, թէ Սրմէնոն ուրիշ
առթիւ ալ խօսած է 1626—1631 տարիներու
մասին:

Դէպքերու մանրամասն մէկ նկարա-
գրութիւնը հասած է մեզի չափական մէկ
գրութեան մէջ, որուն սկզբնաւորութիւնն եւ
վերջաւորութիւնը պակասաւոր է, ուստի եւ
հեղինակն ալ անձանօթ: Այս գրուածքը հրա-
տարակած է Հ. Ղ. Ալիշան իւր Կամենից ի²
մէջ «Վիպասանութիւն Նիկոլական» խորա-

¹ Տես խնդրոց մասին համարօտիւ Հանդ. Ամս.
1934, էջ 4—27:
² Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ
Ռումինիոյ հաստատեաց յաւելուածովք. Վենետիկ 1896,
էջ 202—214:

Ե տարին ոչ ժամ, ոչ աղօթք եւ ոչ Աւետարանին ձայն աղանջը մեր լուսն եւ ոչ աչք մեր զվարդապետ կամ քահանայ տեսան: . . .

Այդ սկսան ուղղափառքն դրամ մսխել եւ դեկան ցրվել մեծամեծաց, իշխանաց եւ պարոնաց, այլ եւ ի Ղարին գնացին քանիցս անգամ եւ հմիրնի բերին եւ ոչինչ օկտեցան. զի կարգաւորքն ամէն եւ մեծամեծքն հետ Նիկիոյ եպիսկոպոսին էին. եւ զի հաւատոյ բան էր՝ չիչխէր թաղաւորն եւ ոչ նախարարքն առնել դատաստան, թէպէտ շատ դանձ եւ խաղինայ տային: Եւ ի թվ. Ռ. 20-նէն մինչ թվ. Ռ. 26. Երեսուն-քառասուն հազար զուսուչ խարճեցին Լովլիք, բնաւ ճարակ կամ հնար չի գտան Հայք:

Եւ իբրեւ հատաւ քաղաքի եկեղեցոյն խաղնան եւ վանօրէիցն եւ ինքն սկսաւ չքաւորել, զի էր յոյժ անատակ¹⁰ եւ վայրապար, ունէր մարդիկ աշխարհականք եւ կարգաւորք, Ի, Լ, պահէր պէտաւի ձիան, կառս մեծազինս եւ տաճիկ ձեանս. եւ ինքն յազանէր բեհեզս եւ ծիրանիս, մախմուր եւ աթլազ, ներքեւանց սամուր մորթի կամ վաշախ. դաւազանն՝ բունն արծաթի, նաեւ սնտուխան, կաղմարն, ջրլուացքն, իպրիխն եւ ամէն անօթքն եւ կահքն զուտոր ոսկէօջրած արծաթէ. վասն որոյ ի սպառ ջնջեալ կորոյս դամենայն ինչ եւ զմեզ:

Գարձեալ խորհեցաւ խորհուրդ չար վասն Հայոց եւ ասէ. Գնամ ես առ մեծն Փափ եւ հանեմ էմբէր եւ Ֆէթվանի, որ յերկրէս Լէհու ուր եւ կան Հայք՝ հնազանդին ինձ եւ Փափին դապի լինին. ապա թէ ոչ արտաքսեցին եւ վտարեցին յերկրէն Լէհու, զի հերձուածողք են: Եւ ելեալ գնաց իւրովքն: Իսկ եղիլի Հայք տարակուսի եղեալ եւ ի մեծ սուգ անկեալ՝ ապաւինեցան ի սուրբ Աստուածածին Կոյսն Մարիամ եւ ի միածին Որդին, բարեխօս ունելով զսուրբ Հայրն եւ Լուսաւորին Գրիգորիոս . . . :

Եւ մինչ մեք յայսմ տարակուսանաց եւ տրամութեան էաք, եկն եհանորապատկ արքայն բազում հեծելօք եւ սպառազինօք ի քաղաքն Լով: Որ գնայր ի վերայ յԱպաղին եւ Թուրքաց խառնիճաղանձ յէքէրին՝ ջնջել եւ հալածել, որպէս եւ եղեն իսկ. զի մեծ սպարապետն բան Քրաքովաքին գնացեալ կոտորեաց, զայլս փախտտական արարեալ մեծաւ

¹⁰ անաթակ:

յաղթութեամբ եւ ցնծութեամբ եկն առ թագաւորն ի Լով քաղաքս:

Եւ օր մի ժողովեալ ամենայն Հայք, ծերք եւ տղայք, երիտասարդք, եկք եւ բնակք բազում յոյժ, եւ գնացին ի դարպասն եւ անկեալ ի վերայ յերեսաց մեծածայն եւ բարձր աղաղակէին սղորմ ու լալի եւ արտասուօք, ճիչ եւ սղբ կակծալի հանեալ զոչէին ասելով. Ողորմեաց մեզ, ով թաղաւոր մեր, եւ բաց գեկեղեցիս մեր: Մինչ զի քաղաքն ամենայն սղրակից լեալ զուժարէին ի վերայ մեր, նաեւ զօրքն արքային. մինչ թաղաւորն ինքնին եկեալ ի պատուհանն՝ ետես եւ լուսաւ զհառաջ, զողբ եւ զգառն կակիծ: Եւ կոչեաց առ ինքն զՀայոց մեծամեծսն եւ ասէ. Զի՞նչ է խիղճն եւ սղորմելի աղաղակն ձեր: Եւ նորա պատասխանի տվեալ ասեն. Մեծ օճիրս եւ բազում փնաս զործեաց մեզ Նիկիոյ եպիսկոպոսն եւ գեկեղեցոյ խաղնան ջնջեաց եւ վտանեալ կորոյս. եւ ինքն գնացեալ ի Հոռոմ՝ կաղեց եւ մօհրեց զբրունս եւ ետ բանալիս քահանայապետիցն աստ: Ասէ բարեպաշտ արքայն. Եւ զիտէ՞ք ստոյգ որ չկայ եւ ոչինչ: Եւ ասեն. Ստոյգ գիտեմք: Ապա ասէ. Մի հողայք. երբ աստ եկի ես, զձեր բանն կուհողամ: Եւ կոչեաց զմեծ քահանայապետն եւ ասէ. Առ ձե՞զ է բանալին Հայոց եկեղեցոյն: Եւ նորա ասեն. Այոյ: Ապա ասէ. Զի՞նչ արար զայսչափ խաղնան: Եւ նորա ասեն. Կայ ամէնն: Եւ բարկացեալ արքայն՝ առաքէ զիւր խորհրդակիցն եւ գնոսա, ասելով. Գնացէք կոտորեցէք զբրունս, զկնիքն աւերեցէք, բացէք եւ ի ներս մտէք, տեսէք զիմ խաղնան: Եւ իբրեւ չգտին եւ ոչինչ՝ ամօթալից դարձան առ թաղաւորն, նկուն եւ սեւերես. զի իբր աւելով ջնջել էր եւ շուրջառ¹¹ մի չէր թողել հին: Ասէ թաղաւորն ցասմամբ. Ապա զուք է՞ր խարէիք զիս, թէ ամէն խաղնան ի տեղն է: Էսո զբանալին եւ հրամայեաց կրկին կնքել իւր մօհրովն: Եւ գրեաց նամակ առ Փափն, թէ Ես ինքնին եկեալ ի Լով, տեսի աչօք եւ լուսայ աղանջօք դամենայն յօճրագործութիւնս եւ չարագործութիւնս այդ Նիկիոյ եպիսկոպոսիդ. եւ թէ ո՛րպէս վատեալ կորոյս զայդչափ խաղնան: Այլ եւ գրեաց դամենայն իրս նորա մի ըստ միովն. եւ թէ Ես կամէի զատել զնա, փախեալ եւ եկն առ քո Սրբութիւնդ. արդ, սուրբ Հայր, դատեցես զնա որպէս զյանցաւոր, զի ոչ եթէ եկն սա ի

¹¹ շուրջառ:

մեր հաւատն վասն Աստուծոյ, այլ վասն ընչից եւ խաղնին եկեղեցոյ: Եւ այլ բազում բանս գրեաց եւ ուղարկեաց: Եւ Հայոց պատվիրեաց, թէ Երբ դամ Շվէտու պատերազմէն ի յաթոսս իմ ի Վարչով, դայք առ իս. ես ձեր եկեղեցիքն կու տամ ձեզ:

Արդ գնալոյն ի վեր եպիսկոպոսին մինչեւ ցայժմ տարի ու կէս անցաւ, երկրորդ տարին մօտեցաւ, բնաւ խաղարն չեկաւ, ոչ ինքն. ոչ գիտեմք, ո՞ղջ է թէ մեռած: Այլ եւ այլ գրուցնի կու գան, եթէ Փափն զինքն արդիւր է. եւ այլք ասեն թէ կորուսել է զինքն. բայց զճշմարիտն միայն Աստուծոյ է գիտելի:

Իսկ Հայոց աղանին գնացին ի Վարչով առ թաղաւորն՝ ի մեծ դիվան, որ կոչի Սէմ: Մի թէ սղորմածն եւ մարդասէրն Աստուած մեր մեղացն չհայի, այլ ծագէ ի սիրտն թագաւորին եւ իշխանացն եւ մեծամեծ նախարարացն զՀողին շնորհաց, որ զթացեալ տան մեզ եւ դարձնեն գեկեղեցիս մեր, զի արժանացին մտից նորա եւ կացցուք մնացուք հայրենի հաւատս եւ օրէնս եւ յաւանդս մեր, փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին յայժմ եւ անդրաւ յաւիտենին. ամէն:

Արդ թողով զայլ իրս ի բաց, եկեցուք ի բանս մեր յառաջին, զոր սկսաք պատմել վասն Սուրկունին, զոր վարէին եւ արտաքսէին: Անդ էր տեսնել զլաց եւ զաղաղակ, զճիչ եւ զհառաջ. զի բաժանէին զորդիս ի հարց եւ զեղբարս եղբարց, զփեսայն հարսնէ եւ հարսն ի փեսէ, զայր ի կնոջէ եւ կին այրէ, եւ քակեալ հեռացուցանէին զբարեկամս եւ զսիրելիս ի միմեանց: Ո՛հ մեծի աղէտի, աւա՛ղ տարակուսանաց եւ հազար վա՛յ տառապանաց որ եկին հասին ի վերայ ազգիս Հայոց, մեծ կակիծք եւ տաղանալք, զի ոչ գիտէին թէ ո՛ւր երթիցեն. ոմանք զթալանլուտներն ծախէին կէս գին. այլք զվասնութիւն եւ զսպապնին առանց զնոջ. այլք զհանդերձս եւ զազանելիքն. կէսք գտան ինչքն եւ զապրանքն. ոմանք երթային եւ այլք ի ծով անկանէին. այլք գնացեալ մերձ սօխթայիք՝ ձեռս աղանէին եւ ի նոցանէ կոտորէին. եւ կիսոց մատաղատունկ մանկունք եւ կո՛յս աղջկունք ի ճանապարհին մեռանէին ի սովոյ եւ ի ծարաւոյ, յանձրեւոյ եւ ի ցրտոյ: Եւ ո՞վ կարէ պատմել կամ գրով արկանել զանցս եւ զվիշտս մեծի աղէտից, զոր յանհնարին չարի դիպան. յառաջմէ հեծելա-

զօրքն, յետուս ծոփն, յաջմէ սով եւ յահեկէ սրածութիւն. եւ ոչ գոյ թիւ աղաղակի նոցա. եւ ոչ կարէին փախչել ուրեք եւ ոչ զգինս փրկանաց անձանց իւրեանց տալ:

Իսկ խօնթքարն գնաց մինչ յերեւան. եւ առ զբերթն եւ զիւր շրջակայ գեղօրայքն. զոր յետ սակաւ աւուրց դարձան զօրքն Պարսից ի վերայ Տաճկաց եւ անինայ կոտորեցին զանթիւ եւ զանհամարս աւելի քան զԺՆ բիւրս եւ առին զքաղաքն դարձեալ յետս: Եւ ասին թէ սուլթան Մուրատն փախտտական դարձաւ ի տուն. եւ այլք ասեն թէ մնաց ի ձմեռայնոցն Համիթ. եւ զայն յայլում վայրի գրեացուք: Զայս սակաւս փոքր ի շատէ ծանուցաք ըստ կարի մերում, որպէս լուսաք ի հաւատարիմ արանց. աղաչեմ համարձակութեանս լուել եւ զանյարմարութիւն բանիս ընդունել. զլուսն ի վատթարացն բաժանել եւ ինձ չի մեղադրել:

Բայց գրեցաւ սա ի հայրապետանիստ մայրաքաղաքն Լէվ կոչեցեալ, որ է Առիւծ, ի դուռն Ննջման սուրբ Աստուածածինն, որ յայժմ գերեալ եւ մատնեալ է յաղթարմայից ձեռս, որպէս ի հնունն Տապանակն ի ձեռս այլազգեաց: Ի հայրապետութեանն տեսն տէր Փիլիպոսի եւ թագաւորութեանն նորապատկ արքային Վրատիւրաւին: Նօտրեցաւ Մեկնութիւն Արարածոցս ձեռամբ երկուց եւ երկից նօտարացն, զոր եղեւ զլուս եւ յաւարտ սորայ թվ. Ռ. 26. գեկտեմբեր ԺԵ. սուրբ Յակոբայ պահոց, զոր աղաչեմ զհանդիպողսդ այս սուրբ Կտակիս . . . զառաջինք եւ զվերջին աշխատողս մէկ Հայր մեղայիւ մի յիշէք . . . ամէն:

Թղ. 139ր. Եւ ինձ անարժան գրչիս Սիմէոն զպրիս մեղաց թողութիւն:

Էջմիածին, Թ. 1004, թղ. 189բ—193բ (Վարդանայ Մեկնութիւն Հնգամատենին):

2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

